



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10173


A. Badar 109

ՄՈՒՀԱՄՄԵԴ



ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹԻՒՆ

Ա. ԱՄԻՐԻ ԱՆԵԱՆՑԻ



1904

297q
U - 96K

03 NOV 2009

297
L-96u.

ՄՈՒՀԱՄՄԵԴ

ԱՇԽԱՏԱԿՐՈՒԹԻՒՆ

Ա. ԱՄԻՐԵԱՆՑԻ

~~~~~

1904.

8.02.2013

10173

ՀԱՆՐԱՊԵՍՏԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
Հ. Ա. Ա. ԲԵԼԵՆՅՈՒ  
Դ ԹԻՖԼԻՍ



### Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն



Տիեզերական պատմութեան մէջ ամենանշանաւոր անձանց մէկը արար Մուհամմէդն էր, որ քառասուն տարեկան հասակում մարգարէութեան սկսեց և տասնուերեք տարի շարունակեց: Թէև մենք հայերս միշտ շրջապատռած ենք Մուհամմէդի հետեւողներով և 1300 տարուայ չափ նորանցից շատ ցտեր ենք կրել և դեռ կրում ենք, բայց մեզանից շատ քիչեր կան, որ զիտեն այդ արար մարգարէի կենսագրութիւնը: Այս համտուած կենսագրութիւնը մէ կարծ տեղեկութիւն է տալիս այդ մարգու վարք ու բարքին վերայ որն այսօր աշխարհաքում 200,000,000 հետեւողներ ունի:

Դիւրին չէ Մուհամմէդի կենսագրութիւնը գրելը: Աղբակւրները շատ եւ շատ պղտոր են: Միայն 150 տարի նորա ժահուանից յետոյ սկսել են արար պատմիչներ նորա մասին բան գրել, և նորանց գրածները հարկաւ այդ երկար մէջոցում փոփոխուած, ուղղուած, կոկուած, զարդարուած բաներ են: Այս գրքոյնը դրելիս մենք ունեցանք մէ քանի երեւելի եւրոպացի արևելագէտների գրուածքները, բայց մանաւանդ մահմէդական պատմագիր Բօլղէթ-ուլ-ահլար գիրքը:

62286-67

# ՄՈՒՀԱՄՄԵԴԸ



Մուհամմէդը ծնուել է <sup>առողի</sup> ասում են, 571 թւականի Ապրիլի 20ին : Նորա հայրն էր Աբգուլահը, որ 570-ի աշունին վաճառականութեամբ Սիւրիայի Գազա քաղաքն էր գնացել, ետ դառնալիս ճանապարհին հիւանդանալով չը կարողացաւ իր հայրենի քաղաքն հասնել, մնաց Մէգինայում ու այնտեղ մեռաւ մի երկու ամսի չափ Մուհամմէդի ծնունդից առաջ : Աբգուլահը Աբգուլութթալիրի որդին էր, եւ սա էլ Հաշիմի որդին էր : Սորանց ցեղի անունը Գօրէլը էր : Թէեւ միւսիմ կենսագրողներն այդ ցեղը հարուստ ու բարձր աղնուական են ներկայացնում, բայց զուրանից երեւում է (սուրէ 43, 30), որ Մուհամմէդի ընտանիքը մի հասարակ քան է եղել : Հաշիմի սերունդը միայն այն ժամանակ սկսեց մարդկանց աչքում բարձրանալ, երբոր 200 տարի յետոյ հաշիմեան ցեղից Աբգասի թոռները հզօր թագաւորներ էին Բաղդադում :

Նորածին Մուհամմէդի մայրն՝ Ամինան տկար լինելով չէր կարող իր մանուկին ծիծ տալ եւ մի կարճ ժամանակից յետոյ յանձնեց նորան Հաշիմէ անունով մի գիւղացի կնոջ, որ նորան Մէքքէից առաւ տարաւ դաշտը իր վրանը : Այնտեղ նա մնաց վեց տարի : (\*)

(\*) Մուհամմէդի Հաշիմէի մօտ մնացած ժամանակի մասին տասնից աւելի այլեւայլ պատմութիւններ կան իբն-Խոհակից, Վաղիպէից, իբն-Աբու-Շէքրաից, իբն-Ասդից, Թա-

Երբոր Մուհամմէդին եւս բերեցին յանձնեցին մօրը , դա չանցած վեր առաւ տղային գնաց Մէկինայ եւ այնտեղ մի ամիս մնալուց յետոյ հիւանդացաւ ու մնաւ : Պապը Աբու-Պուլութթալիբը , որ մի 80 տարեկան ծեր էր , առաւ որբին իր մօտը ու երկու տարի պահելուց յետոյ՝ դա էլ մնաւ , ու նորանից յետոյ Մուհամմէդին առաւիր տունը հօրեղբայրը՝ Աբու-Թալէբը , որ թէեւ աղքատ էր եւ երկու կին ու տասը զաւակներ ունէր , ընդունեց Մուհամմէդին եւ պահեց ու պաշտպանեց նորան մինչեւ իր մահը : Ղուրանում ասուած է (առորէ 93, 7) «Ասուած տեսաւ քեզ որբ եւ քեզ պատապարեց» : Աւանդութիւնը ասում է , որ Մուհամմէդին իր երիտասարդութեան ժամանակ մէքքեցիների ոչխարների հոլիւն էր : Նաեւ ասում են , թէ իր հօրեղբայր Աբու-Թալէբի հետ

բարէից , Հալէբիից , Ալ-Բուխարիից եւ միւսներից : Սուրանք ի միջի այլոց պատմում են , թէ մի օր , երբոր Մուհամմէդը մի քանի երեխաների հետ միասին գաշտումը ոչխարներ էր պահում , յանկարծ նորանցից մէկը վազելով գալիս ասում է Հալիմէին , թէ մենք այնտեղ ոչխարները պահելիս սպիտակ հագուստներով երկու մարդիկ եկան մեր Գօրէյշեան եղօրը պառկեցրին գիտնի վերայ եւ փորը ճեղքեցին : Հալիմէն ասում է , թէ ես ու այս իսկոյն վազեցինք դաշտը եւ տեսանք Մուհամմէդին սպրդնած կանգնած , ու հարցրինք թէ «քեզ ի՞նչ է պատահել» : Նա էլ պատասխանեց , թէ երկու մարդիկ եկան , ինձ պառկեցրին ու փորը ճեղքեցին եւ մէջը մի բան էին պարտում : Մենք ետ եղել : Նորան վեր առանք տարանք քաղաքը , թէ այդ տղան ուշաթափ է տանք , եւ ասացինք որ երեխային բերել ենք որ իրան յանձնենք : Մայրը հարցրեց պատճառը . ասացինք որ գեւունի եւ ուշաթափ է եղել : Բայց Հալիմէն երեխային կրկին մեզ յանձնեց , ու տարանք պահեցինք մինչեւ վեց տարեկան հդաւ : Արդէն իբրեւ երեխայ ուշափնացութեան հիւանդաւթիւն է ունեցել արաբ մարդարէն :

վաճառականների կաթալանի հետ միասին Սիւրիայի քաղաքներն է գնացել ու այդ ճանապարհորդութիւնների ժամանակ ճանօթացել է քրիստոնեանների հետ :

Ոչ Աբու-Թալէբը եւ ոչ Մուհամմէդը այնչափ կարողութիւն չունէին , որ իրանք վաճառականական գործ սկսէին , եւ այդ պատճառով նորանք ուրիշ հարուստների յանձնարութեամբ առեւտրական ճանապարհորդութիւններ էին անուն : Այդ ժամանակները Մէքքելյում մի պատուառը հարուստ կին կար՝ անունը կազիմէ , որ իր մարդու մահուանից յետոյ էլ նորա վաճառականութիւնը շարանակում էր : Մուհամմէդը որ քանառուցորս տարեկան էր , վարձով մտաւ այդ կոոչ գործի մէջ եւ նորա հրամանով ճանապարհորդութիւններ արեց : Կազիմէն որ , ինչպէս որ ասում են , մօտ 38 կամ 40 տարեկան էր , աչքը գրել էր իր երիտասարդ գործաւորին վերայ եւ մտածում էր հետը ամուսնանալ : Հայրը՝ կոուլէլէդ , հակառակ էր այդ ամուսնութեան : Բայց կազիմէն խորագէտ էր , յաղթեց ու իր նապատակին հասաւ : Նա իր հօրը հարթեցրեց , եւ այդ վիճակի մէջ նորանից հաճութիւն սոսացաւ , եւ որովհետեւ հարսանիքի համար արդէն ամեն պատրաստութիւն տեսաւած էր , հայրը իր գինովութիւնիցը չըսթափուած կազիմէն արդէն Մուհամմէդի կին էր գարձել :

Այդ կինը Մուհամմէդի վերայ մեծ ազգեցութիւն ունեցաւ բոլոր ժամանակը մինչեւ իր մահը : Քանի որ նա կենդանի էր , Մուհամմէդը մտքիցը անգետ չէր անցկացնում մի ուրիշ կին առնելու , բայց նորա մահից յետոյ տասը տասներկու կինիկ տաս :

Սրանից մէկը Աբուբէքրի աղջիկը Ալյէն էր , որ միշտ նախանձում էր մեռած կազիմէին , որովհետեւ Մուհամմէդը սովորութիւն ունէր այն ատամները թափուած կնկանը միշտ երեւ օրինակ ներկայացնել իր միւս կնիկներին :

Կազիմէի մահից յետոյ Մուհամմէդը բնակվում էր նորա տանք , որ Մէքքելյի ամենալաւ բաժնումն էր : Թէիւ շարունակում էր վաճառականութիւնը (առու սուրէ 25, 6) եւ բաւական լաւ վիճակ ունէր (սուրէ 93, 6 եւ 108, 1) մինչեւ 617 վրկչական թուականը , բայց չէ կարելի է ասել թէ

հարուստ էր։ Նորա հաւատացեալները բաւական մահմէդականացած գերիներ էին ծախու առնում, որ ազատեն, բայց Մուհամմէդի համար այդպիսի մի բան միայն մէկ անգամ է յիշուած։

Մուհամմէդը Խաղբճէից վեց զաւակ ունեցաւ՝ երկու տղայ եւ չորս աղջիկ։ Առաջին տղայի անունը Գասըմ էր, եւ գուրա համար նորա մականունն էր Աբուլ-Գասըմ այսինքն Հայր Գասըմի. իսկ երկրորդի անունն էր Յար-Մանափ, Մանափ կուռքի ծառայ։ Այդ երկուսն էլ մևուն իբրև մանուկներ։ Աղջիկները մեծացան, չափանա եղան ու ամուսնացան, մեծը՝ հայրը գեռ մարգարէութեան չսկսած ամուսնացել էր մի կոպաչաշի հետ։ Այդ չորս աղջիկներից միմիայն ամենակրտսերը՝ Ֆաթիմէն, որ Մուհամմէդի հօրեղբօր Աբու-Յալէքի որդի Ալիին էր, որդիք ունեցաւ, որոնց ճշմարիտ եւ կեղծ սերտնքներովը, որոնք սէլիդ են կոչվում, լիքն է արհեւելքը։

Մուհամմէդի եւ Խաղբճէի ամուսնութեան ընտանեկան ցուցակը։

571 20 Ապրիլի ծնունդ Մուհամմէդի.

595 22 Յուլիսի Մուհամմէդի ամուսնութիւնը Խաղբճէի հետ

596 11 Յուլիսի ծնունդ Գասըմի.

597 30 Յունիսի ծնունդ Զէյնէրի.

598 19 Յունիսի ծնունդ Սաբ-Մանափի եւ մահը.

600 29 Մայիսի ծնունդ Ուօքայեայի.

604 15 Ապրիլի ծնունդ Օմի-Յուլսումի.

605 4 Ապրիլի ծնունդ Ֆաթիմայի.

612 18 Յունի. Մուհամմէդն սկսում է մարգարէութիւնը.

Զէյնէրը ամուսնացած է եւ Ռոքայեան նշանուած։

619 23 Հոկտ. Խաղբճէի մահը, Ռոքայեան ամուսնացած

623 9 Սեպտ. Ֆաթիմէի ամուսնութիւնը Ալիի հետ։

624 — Մարտ Բէգրի պատերազմը, Ռոքայեայի մահը.

624 — Սեպտ. Օմի-Յուլսումի ամուսնահալը.

629 6 Յուլիսի Զէյնէրի մահը.

630 20 Ապրիլի Օմի-Յուլսումի մահը.

632 29 Մարտի Մուհամմէդը մեռնում է Յունիսի ութին. Ֆաթիմէն էլ մեռնում է Դեկտեմբերի ամսում։

35 տարեկան Մուհամմէդի մասին մի պատմութիւն կայ, որը թէեւ հաւատալի չէ, բայց որովհետեւ միւսլիմ պատմիչները գրում եւ մահմէդականների մէջ չառ տարածուած է, թող այստեղ յիշենք։ Պատմում են, թէ այդ ժամանակ սկսել էին Մէքքէի ժողովուրդը Քէարայի մատուռի շնչքը նորոգել, եւ երբոր հասել էին այն տեղին ուր որ սեւ քարը, (հաճար ուլ ասվաղ), որը ուխտաւորները համբուրում են, զնել պէտք էր, մատուռը շնորդ չորս ցեղի միջն վէճ ծագեց, թէ ո՞վ պէտք է քարը տեղը դնէ։ Չորս կամ հինգ օր շարունակուեց այդ վէճը, եւ քիչ էր մնացել, որ իրար ծեծէին։ Մախղումնան Մօղէյր անունով մի անձ, որ Մէքքէյում շատ յարգուած էր, առաջարկեց, այդ վէճի լուծումը յանձնել այն մարդուն, որ Շայրայի դոնովը առաջինը կը մտնէ աղօթատեղոյն բակը։ Ամենն էլ համաձայնուեցին, ու դիսուածով Մուհամմէդն էր առաջինը որ ներս մտաւ, եւ որովհետեւ նա կրում էր «հաւատարիմ» անունը, ամենն էլ ուրախացան որ նու է վճառելու։ Մուհամմէդն ասաց, որ մի շոր քերեն. ինքն իր ձեռնովը դրաւ քարը այն շորի վերայ եւ ասաց, որ այն չորս ցեղի գլխաւորները ամեն մինը մէկ անշէից բարձրացնեն։ Նորանք էլ այդպէս արեցին։ Եւ երբ որ քարը այնչափ բարձրացրել էին մինչեւ նորա զրուելու տեղը, նա իր ձեռքովը քեց տեղը դրեց։ — Այս պատմութիւնը հնարած է, որովհետեւ Մուհամմէդը երեխայ էր զեռ, նրբոր Քէարայի մատուռը նորոգուեց, ու նորա չորջը պարիսպ քաշուեց Մուհամմէդի մահից յիսոյ Օմարի ժամանակին։

Միւսլիմ պատմիչները Մուհամմէդի ճշմարիտ մարգարէ լինելը հաստատելու համար Բաշիրա վանականի վկայութիւնն են բերում, որ ինը աւանդութիւն պատմողներ այլ եւ այլ կերպով են դրել այդ վկայութիւնը Մենք այստեղ միայն մէկը յիշելով բաւականունքունք։ Ղուրան։ Հին մեկնիչներից վահնեցի անունով մի զուրանագէտ սուրէ 46, 14ը բացարեւով այսպէս է ասում, թէ երբոր Աբու-Յէքքը 18 տարեկան էր ու Մուհամմէդը 20, միասին առեւտուրի նակատակով

ճանապարհորդեցին գէպի Սիւրիա։ Մի կայանի ճառնելով վար իջան մի ծառի տակ, որի մօտ մի վանք կար։ Մունամէզը նստեց ծառի շուաքումը, խև Արու-Բէքը զնաց վանքի վանահօրը մօտ ու հարցուափորձ արեց ձշմարիտ կրօնքի մասին։ Վանահայրը հարցրեց, թէ ով է այն մարդը որ ծառի տակին նստել է։ Նա էլ պատասխանեց, Արգուլլահի որդի Մունամէզն է։ Վանահայրն ասաց, «Երդում եմ անում Աստուծով, որ դա մարդարէ է։ որովհետեւ Յիսուսից յիտոյ միմիայն Աստուծոյ գետպան Մունամէզը պիտի նըստէր այդ ծառի տակին»։ Այս խօսքը մեծ ապաւորութիւն արեց Արու-Բէքը վերայ այնպէս, որ նա միշտ նորա հետ էր լինում թէ Մէքքէում թէ ճանապարհորդելիս, եւ երբ Մունամէզը 40 տարեկան էր եւ Արու-Բէքը 38 եւ Մունամէզն սկսեց իրան մարդարէ հրատարակել, Արու-Բէքը նորան հաւատացող առաջիններից մէկն էր։ Ինչպէս որ յիշուեց, այս պատմութիւնը այլեւայլ կերպով։ արուած այլ եւ այլ պատմիչներից։ Ոմանք Արու-Բէքը տիգ յիշում են Մունամէզի հօրեղբայր Արու-Թալիբին։ ոմանք ասում են Մունամէզն այդ ճանապարհորդութիւնը անելիս 12, ոմանք 20 եւ ոմանք 24 տարեկան էր։ Ոմանք վանականին հահիրա եւ ոմանք նեստոր անունն են տալիս։ Ոմանք էլ բանը ուրիշ կերպ ներկայացնելով ասում են, թէ վանականը վանքի կառուրիցը նայելով տեսաւ, որ մի կարաւան է գաւիս նեռուից, բայց կարաւանից վեր մի ամպ էլ նովանի անելով միշտ նորանց նետ է դնում եւ երբոր կարաւանը եւ կաւ վանքի մօտ իջաւ, մարդիկն ամենը զնացին վանքը, խև մէկը, որ Մունամէզն էր, զնաց ծառին տակին նստած եւ այն նովանի անող անզը մնաց նորա վերայ կանգնած։ Ասում են, թէ այդ վանականը Սուրբ գիրքն առա զնաց ծառի մօտ եւ սկսեց բազգատել այն նշանները, որ Սուրբ գրքի մէջ լիշուած էին, եւ տեսաւ որ բոլորն էլ կային Մունամէզի անձի վերայ բացի մէկից, որ պէտք է լինէր նորա կռնակի վերայ երկու թիկունքի մէջտեղը։ վասնորոյ խնդրոց, որ նա բանայ իր մէջքը, ու երբոր բացաւ, վանականը այդ նշանն էլ գտաւ՝ խնձորի մեծութեամք մի սեւ,

կըոր բիծ երկու թիկունքի մէջտեղը։ Ասում են թէ Մունամէզի մարդարէութեան փաստը այդ մեծ բիծն էր, որ նա կրում էր իր բոլոր կեանքում, բայց երբոր նա մեռաւ եւ ուզեցին զիակը լուալ, տեսան որ մարդարեական նշանն էլ հոգուն հետ թաել գնացել էր։

Հիմայ այսահղ պատմնեք, թէ Մունամէզն ինչպէս սկսեց իր մարդարէութիւնը, բայց գորանից առաջ պէտք է մի քիչ նկարագրել այն ժամանակուայ արարների կրօնքը եւ Արարիայի, նա մանաւանդ Մէքքէի ու Մէդինայի կրօնական վիճակը, որի մէջ ծնուել, մեծացել ու գործել է նա։ Նորանք հաւատում էին երկնքի ու երկրի արարիչ՝ բարձրեալ Աստուծոյն։ ուխտագնացութեան ժամանակ ասում էին, «Հրամմէ՛, հրամմէ՛, հրամմէ՛, քեզ պէս մի էակ չըկայ։ եւ եթէ մէկը լինի, իշխողը գու ես ու ոչ ոք ուրիշը»։ Նորանք հաւատում էին, որ անձրեւ նա է ուզարկում եւ աշխարհքը կառավարում, եւ երբոր նեղութեան մէջ էին լինում, ոչ թէ կուռքերին էին ազօթում այլ Աստուծոյն։ եւ երգում անելիս, միշտ Աստուծոյ անունն էին լիշում։ (առքէ 43, 8. 31, 24. 39, 39. 23, 86—91. 29, 63. 39, 11. 10, 13. 6, 40—48. 31, 31. 16, 55) Բայց հաւատում էին նաեւ, թէ մէկ հատ բարձրեալ Աստուծուց չոկ կային եւ փոքր ստորագրեալ զօրութիւններ, որոնցից մին քամիի վերայ, միւսը անձրեւի վերայ, մի ուրիշը արտերի վերայ, ու այսպէս ամեն մէկը մի ուրիշ բանի վերայ էր իշխում, այնպէս որ իբր թէ Աստուծ հեռու երկնքումը նստած իրեւ թագաւոր՝ աշխարհքը կառավարում է այդ զօրութիւնների միջոցով։ Արարները կարծում էին, թէ այդ զօրութիւնները իգական անձնաւորութիւններ են իրեւ Աստուծոյ աղջիկները, ու իրանց օրական հասարակ գործքերի եւ զբաղումների մէջ միշտ զորանց էին դիմում որ իրանց օգնեն։ Դուրանը զորանց անուանում է աստուծընկերներ։ Արարները Աստուծոյ համար ազօթատեղի չէին շինում, այլ շինում էին միայն այդ աստուծընկերների համար, եւ ընծաներ ու զուեր մասուցանում էին միմիայն զորանց։ Երբեմն Աստուծոյ

համար արտեր էին ցանում բայց նորանց արդիւնքը աղքատներին տալիս իսկ աստուածընկերների համար ցանածի պառզը տալիս էին քուրմերին։ Երբոր քամին Աստուածոյ բաժնիցը մի բան գցում էր այն փոքր աստուածընկերների բախնի մէջը, նորանք ետ չեին գարձնում, ասելով թէ մնձ Աստուածը այգավիսի փոքր բաների ուշադրութիւն չի գարճնի։ իսկ երբոր հակառակն էր լինում, փոքր աստուածների բաժնը իսկոյն ետ էին գարձնում ասելով, որ սորանք այդ առարքերին ու ընծաներին կարօտ են եւ իրանց կը պատմեն եթէ նորանց բաժինը կատարելավէս իրանց չը յանձնեն։ Բայց Աստուածուց եւ աստուածընկերներից պաշտում էին արարները նաև շատ կուռքեր, որոնք աներեւոյթ անձնաւորութեանց ներկայացրուցիչներն էին համարվում, Քէարէի մատուումը ասում են պատմիչները, թէ 360 կուռքեր կային։ Արարները մատուցանում էին իրանց աղօթքները այդ շօգավելի եւ տեսանելի կուռքերին, գորանք էլ մատուցանում էին աստուածընկերներին եւ նորանք էլ Աստուածոյն։ Այդ կուռքերը տեսակ տեսակ էին եւ այլ եւ այլ անուններ ունէին։ Աստղերը, լուսինը, արեգակը, առաւօսը, զիշերը, ցերեկը, երկինքը, հողը, երկիրը եւ ուրիշ բաներ պաշտօն էին ստանում։

Արարներն ունէին նաև կուռքերի պաշտօնեաներ, որոնք «քէահին» էին կոչվում. այդ քէահինները գուշակութիւններ էին անում եւ գաղտնիքներ յայտնում։ Որոշ կերպով յայտնի չէ, թէ այդ քէահին անունը արարները ասորիների «քահանայ» կամ հրէաների «քօհէն» խօսքիցն են առել։ Միշտ գժուարութիւններ ունեցողները գորսնց էին դիմում, որոնցից ոմանք շատ մնձ վարպետութեամբ կարողանում էին այնպիսի պատասխաններ տալ, որ մարդկանց զարմացնում էին։ Կային նաև հմայողներ, որ գեւերի միջոցով մարդկանց ուզածները կատարում էին։ Ղորանը հաւատում է, իբր թէ գեւերը մինչեւ Մուհամմէդի մարգարէութեան սկսելը վեր էին գնում բարձրացնում մինչեւ երկինքի տակը եւ այնտեղ ծածուկ ականջ գնում, թէ երկնքումն ինչեր են

են խօսվում եւ ինչեր որոշվում այս աշխարհքի մարդկանց համար, եւ իրանց «լսելով գողացածը» բերում հմայողներին «սահըրներին» էին հաղորդում։ Բայց Մուհամմէդը գալուց յետոյ իբր թէ Աստուած երկնքի տակին հրեշտակներ է պահապան դրել, որոնք գողութեան եկող գեւերին տեսնելիս, իսկոյն նորանց ետևելից կրակոս ասողեր շպրտելով հալածում են նորանց։ Ղորանը այսպէս է բացարում թըռչող ասողերը կամ ասուանները, մէթէօրները (սուրէ 15, 17) չող էին կոչում։ Մինչեւ անգամ կարծում էին արարները, թէ իսկագարների մէջ գեւեր կան, եւ որ նորանց անկապ խօսածները գեւերի մտքերն են։

Իսլամի ծագումը լաւ հասկանալու համար սա էլ պէտք է իմանալ, որ Մուհամմէդի ժամանակը Արարիայում շատ հրէաներ կային մասամբ ցիրուցան եւ մասամբ էլ առանձին մեծ ու փոքր գլուզերում ու բերգերում բնակուած։ Կային նաև շատ քրիստոնեաներ՝ մանաւանդ Մէքքէում։ Մինչդեռ հրէաները, ինչպէս որ նորանք այսօր էլ են, իրանց կրօնքը իրեւ ծէսեր ու արարողութիւններ միայն արտաքուստ էին կատարում վեր ի վերոյ, քրիստոնեանները ըստ մեծի մասին եռանդու ոգեւորուած մարդիկ էին, որ իրանց կրօնական համոզմներն արարների մէջ տարածելու համար ջանք էին անում։ Այդ քրիստոնեանները երեւում է մտածող մարդիկ էին, որ իրանց երկրի մանաւանդ բիւզանդական կայսրութեան ուզագափառ զաւանութիւնից արրբեր համոզումներ ունէին, զորօրինակ արիստականաւթիւն, նեստորականաւթիւն, երեւութեականութիւն, սարէութիւն եւն, եւ այդ պատճառով յոյնադաւան եկեղեցու կողմանէ հալածուած լինելով փախչում ազատամիտ կռապաշտ Արարիցայում ապաստան էին գտնում ոչ միայն, այլ պատեհութիւն էլ էին ունենում իրանց համոզմները տարածելու։ Խորհող արարների վերայ տապաւորութիւն էին անում։ Մի հետաքրքրական պատմութիւն ի հարկէ մի քիչ արարական ոճով զարդարուած, աւանդում է մեզ Մուհամմէդի կենսագրութեան հեղինակ իրն-

իսհակը տյապէս . «մի օր զօրէցացիք հաւաքուած էին իւրանց պաշտած մի կուռքի մօտ , որին դոներ էին մասուցանում և շուրջը պտտում» : Չորս միմեանց ծանօթ և զաղափարակից անձինք ծածուկ մէկ կողմ քաշուեցին , որ իւրանց մտքերն աղատորէն իրար յայտնեն և այդ մասին ոչ ոքի բան չ'ասեն : Այս չորս անձինքն էին՝ Վարագա իրնանվագալ , Մուհամմէդի կնոջ՝ Խադիճէն հօրեղոր որդին , Օման Իրնաւալ-Հօվայրիս , Օրէյդուլլահ Իրն-Ճահ , Մուհամմէդի մօրաքրոջ որդին , և Զայդ Իրն-Ամր : Սորանք ասուցին միմեանց , «Մեր ազգը սիսալուած է , և իւրանց կրօնքը ոչնչացրել են : Մի՞թէ կուրելի է պատյա տալ մի քարի չուրջը , որ ոչ լսում է և ոչ անունում , և որ ոչ կարող է ֆաս և ոչ օգուտ տալ : Եկէ՞ք մի աւելի լսու կրօնք գտնինքը» : Յետոյ ձղեցին իւրանց երկիրը և ճանապարհորդեցին ուրիշ տեղեր «Հանիփական» կրօնքը այսինքն Սբրահամի կրօնքը վնասուելու : Վարագան մի հաստատ հանողուած քրիստոնեայ եղաւ , քննում էր Սուրբ Գիրքը և շատ տեղերը օրինակում արաբերէն լեզուով սա շատ բան էր սովորել Սատուածառնունչին հաւասացողներիցը : — Օրէյդուլլահ գնաց կասկածների մէջ մինչեւ որ վերջապէս Մուհամմէդի իսլամն ընդունեց , Բայց երբոր միւս միւսլիմների հետ սկսեց հալածանք կրել , առաւ իր կինք Օմմ-Հաբերէն իր հետը փախաւ գնաց Հաթին ունենալով ձգեց խլամը և շատ քրիստոնեայ եղաւ : Նա նորա այրի կնոջ հետ : — Օմմանը գնաց Բիւզանդիոն և մընէութիւնը և միծ պատիք արժանացաւ : — Զայդ Իրն-Ամրը դուց իր հայրենական կրօնքը , ևս էլ ընդունեց քրիստոնչ հրէութիւնը և ոչ քրիստոնէութիւնն ընդունեց . նա թումութուած անասունի միս ուտելուց . չէր ուտում նաև կուռք զոհի միսը կամ նորանց արխւնը : Նա խիստ ընդդէմ էր արաբների սովորութեանը , որ նորածին աղջիկներին թաղում էին , և ասում էր , թէ ինքը Սբրահամի Սատուածոյն

էր պաշտում : Նա նախատում էր իր ազգի կրօնական մուլութիւնները : Մի օր երբոր բաւական ծերացել էլ Զայդը մէջը Քէարային տուած , ասաց այնտեղ ներկայ ժողովուրդին , «Երդում են անում նորանով , որի ձեռնումն է իմ կեանքը , որ ձեր մէջումը ես մէկ հատ անձ եմ , որ հետեւում եմ Սբրահամի կրօնքին» , և շարունակեց , «Ով նառուած , նթէ ես գիտենայի թէ քեզ պաշտելու ո՞ր ձեւն է քեզ ամենահաճելին , ևս այն ձեւովը քեզ կը պաշտէի . բայց չը գիտեմ» : Յետոյ ծունը գնելով աղօթքը արեց ինչպէս որ էր , այսինքն առանց նախապէս լուացմունք կատարելու : Իրնիսակ պատմում է , որ Զայդն իր աղօթքից յետոյ մի բաւական երկար եւ լաւ յորգոր ու զզեց ժողովուրդին , որի բովանդակութիւնը թէեւ գուրանի ոճին ու մտքին նման է , բայց նորանից շատ բարձր ու մաքուր է : Ոչ նորա այդ աղնիւ յորդորը եւ ոչ էլ նորա մնացած կենսագրութիւնը կարող ենք այստեղ զետեղել անձկութեան պատճառով . միայն այսչափ պէտք է ասենք , որ Զայդը երկար ճանապարհորդութիւններ արեց և մանաւանդ գնում էր քրիստոնէից վանքերը և շատ խօսակցում վանականների ու ճգնաւորների հետ : Զայդը ինքն էր այն ժամանակուայ կրօնական շարժման պատճառը նաև վարովը :

Սբրափիայում գանուող քրիստոնեանների միջոցով կոսպաշտ արաբների մէջ առաջ եկած շարժումնից , որից բռնուել էին ինչպէս տեսանք նոյնիսկ Մուհամմէդի մօտիկ ազգականները , բռնուած էր նաև Մուհամմէդն ինքը : Նորա հայրը Սբրուլահը , Պապը Սբրուլմութթալէրը , հօրեղբայրը Սբրութալիիրը , մայրը կմինէն , բոլորն էլ կոսպաշտ էին և կոսպաշտ էլ մեռան : Մուհամմէդն էլ ծնուել ու մեծացել էր կոսպաշտութեան մէջ , ինչպէս զուրանն էլ վկայում է (տես առքէ 93, 7) և թէեւ գնում եւ Հիրա սարի քարայրումը շարաթներով ճգնում էր , բայց եւ այնպէս Մէքքէ եկած ժամանակը գնում կրօնական ծէս կատարելով Քէարայի շուրջը պատյա էր անում չընայելով որ 360 կուռք կար մէջը : Սբրէն զեռ 30 տարեկանի չափ էր , որ կրօնական խնդիրներով զբաղվում եւ


իւրաքանչիւր տարի մի քանի շաբաթուոյ համար ուստեստ առնելով յիշեալ Հիրա սարի քարայրերում մնում էր աղօթելով։ Պատմիչներն ասում են, թէ շատ անդամ լսում էր, որ կանչում էին իրան անունը, բայց երբոր ամեն կողմին նայում էր, մարդ չէր տեսնում։ Ասում են, թէ այդ դէպքը Մուհամմէդին պատահեց շատ զօրեղ կիրազվ, երբոր նա 40 տարեկան էր։

Սյատեղ պէտք է յիշենք, որ զուրանը Մուհամմէդի կեանքի պարագաներից մի որոշ բան չէ պատմում, ինչպէս Աւետարանն է Փրկչի կեանքը մանրամասնօրէն նկարագրում։ Մուհամմէդի կենասպառութիւնը գրողների ամենից առաջինը իրն-իսհակն է։ որ մեռել է հիճրէթի 151 թւականին։ Իրն-Հիշամ որ մեռաւ հիճրէթի 213 թւականին, սրբագրեց եւ ուղղեց իրն-իսհակի հեղինակածը եւ ինչպէս որ ինքը ասում է, «մի քանի բաներ որ Մուհամմէդին պատիւ չին բերում» գուրս ձգեց։ Յետոյ Վագիդի, որ մեռաւ 207 թւականին, գրեց մի աւելի ընզարձակ կենասպառութիւն իրանց մարգարէին։ Իրն-Սադ, որ Վագիդիի գրադիրն էր եւ մեռաւ 230 թւականին, աւելի լաւ կարգով զասաւորեց իր ուսուցչի գըրածը եւ հրատարակեց այդ կերպով սրբագրած կենասպառութիւնը Մուհամմէդի «թաբաղաթ» անունով գրքի մէջ։ Միւն-ինների չորս ամենանշանաւոր իմամներից Մալիքը ասել է որ իրն-Օգբայի գրած կենասպառութիւնը Մուհամմէդին ամենասույզն է, բայց այդ գիրքը վաղուց կորած է, եւ շատ հաւանական է որ պատճառն այն էր, որ մարգարէի մասին աննպաստ բաներ էր պարունակում։ Սյոյ չորս երեւելի իւմամներից Շաֆէին այսպէս է ասել, «Վագիդիի աշխատանքները ասութիւններ են, ինչպէս նաեւ իրն-իսհակինը, մանաւանդ նորա սկիզբը» այս առարկայի վերայ գրուած ամենից վատանելի գիրքը իրն-Օգբային է»։ Բայց զարմանալին առ է, որ նոյն իսկ այդ խելացի ու արժանապատիւ Շաֆէի իմամը Մուհամմէդի այն խօսքին էր հետեւում, որ ասել էր թէ «իմ մասիս ասացէք ամեն գովասանք բացի նորանից որ քրիստոնեաներն ասում են Յիսուսի մասին « (այսինքն թէ

Յիսուսը Աստուած է») եւ ընդունել էր այն սկզբունքը, թէ «Մուհամմէդին փառաւորելու համար թոյլ է արուած աւանդութիւնների մէջ չափազանցել»։

Պարզ բնական բան է, որ իսլամի պէս մի քաղաքական կրօնքի հիմնադիրի մահուանից յետոյ, որ մի երեք չորս տասնեակ տարիների ընթացքում յափշտակեց աշխարհքի մի մեծ մասը Սպանիայից մինչեւ Հադկաստան, նորա դաւանողները միշտ հաւաքիւմ Մուհամմէդի առաքինութիւններն ու քաջագործութիւններն կրկին եւ կրկին գովում եւ փառաբանում էին ի հարկէ ամեն անգամ նորա պակասութիւններն ու արածաները փոքրացնելով կամ գուրս ձգելով, իսկ նորա լաւ խօսքերի և արարքների լուերիցը գիրկեր շինելով, կամ նոյնիսկ՝ բնաւ չ'եղած նորանոր սիրալի գործեր եւ առաքինութիւններ ստեղծելով նորա համար։ Մուհամմէդի ստոյդ կենասպառութիւնը չըկայ, այլ ամեն ինչ, որ նորա մասին մահմէդականներն ունին եւ զիտեն, 100—200 տարուայ միջոցին տակաւ առ տակաւ բարեփոխուած գովարանական վիպասանութիւն պէտք է համարել։ Արդէն մահմէդական պատմիչներն իրանք իրանց մարգարէի մասին մի պատմութիւն անելիս շատ եւ շատ անգամ «ասում են թէ» խօսքովն են սկսում։ Ուրիշն մենք էլ այսակը ինչ որ իբրեւ Մուհամմէդի կենասպառութիւն պատմում ենք, չենք կարող հաստատել թէ իրողութիւններ են, այլ կը ներկայացնենք իբրեւ «ասում են», այսինքն ամենալաւ պատմութիւնները, որ իրանց պատմիչները գրել են։

Այս տողերն ընթերցողին մի գաղափար տալու համար բառ առ բառ թարգմաննենք այստեղ Թօվլիթ ուլ-ահբար նշանաւոր պատմական գրքից Մուհամմէդի մարգարէւթիւնն կոչուելու պատմութիւնը։ «Պատմութիւններն ասում են, թէ երբ որ Մուհամմէդը 40 տարեկան եղաւ, Աստուած նորան մարգարէւթիւն ատլով բոլոր մարգարէւթեան ուղարկեց եւ նորանից առաջ էլ նորան այլ եւ այլ նշաններ ու հրաշներ էին երեւացել, այսինքն ծշմարիստ տեսիլքներ էր տեսնել, ու քարերն ու ծառերը նորան բարեւ էին տալիս։ Ճա-



բըր իբն Սամրէն ասում է , թէ մարգարէիցը լսեցի , որ ասում էր թէ ես իբրև մարգարէ ուղարկուելուց մի քանի օր առաջ գիշերները եւ ցերեկները որ քարի եւ ծառի որ հանդիպում էի , ինձ ասում էին «ողջոյն քեզ , ով Աստուծոյ մարգարէ» :

«Ասում են , թէ նորան յայտնութիւն դառուց առաջ , երբոր նա մի ճանապարհով գնում էր , մի ճայն էր լսում , որ կանչում էր «ով Մուհամմէդ» , օրհնեալը (Մուհամմէդը) աջ ու ձախ նայելով ոչ ոքին չէր տեսնում , եւ գա դորանից շատ վախենալուց փախչում էր : Մի անգամ էլ նա իր այդ գէպքը պատմեց իր կնոջը իսպիճէին ասելով , «վախում թէ ինձ փորձանք է պատահելու» : Կինը պատասխանեց , «Երբէք . Աստուծ քեզ ոչ մի փորձանքի չի հանդեպեցնի . ուրախ կաց . Աստուծ քեզ համար միշտ բարիք է ու զում» :

«Ասում են նաև , թէ յայտնութիւն դալուց մի տարի առաջ նորան մի ճայն էր գալիս , իսկ նա ոչ ոքին չէր տեսնում . եւ եօթը տարի մի լոյս էր տեսնում եւ նորանով ու բախտանում» :

«Վատահելի աւանդութիւններով հաստատուած է , տառմ են որ Այլէն ասել է , թէ Աստուծոյ մարգարէին ամենից առաջ տրուած բանը ստոյդ երազներ էին , այսինքն նորա տեսածը արշալոյսի պէս բաներ էին . իսկ նորանից յետոյ նա սիրում էր ետ քաշուել ու առանձնանալ , ու Հիրա սարի քարայրումը մնալով ծառայում էր Աստուծոյն , եւ երբոր իսպիճէի հետ տեսակցվում , յետոյ պաշար էր պատրաստելու . եւ այստեղ յանկարծ եկաւ յայտնութիւնը» :

«Եւ մի աւանդութիւն էլ այն է , որ մարգարէն տարին մի անգամ Մէքքէից դուրս էր դալիս գնում Հիրա սարի քարայրում առանձնանում եւ այնտեղ Աստուծոյն պաշտում . ու մէկ ամիս այնտեղ մնալուց յետոյ ետ էր դառնում Մէքքէ ։ Քէաբայի շուրջը եօթն անգամ պտոյա տալիս ու տունը

գնում : Ամեն տարի այսպէս էր անում , մինչեւ որ քառասուներորդ տարեկան եղած ժամանակը կրկին գնաց Հիրա իր սովորութեան պէս» :

«Այն Օրհնեալի մասին պատմում են , որ ասել է թէ ես Հիրա քարայրումն էի , (ոմանք էլ ասում են) , Հիրա սարի վերայ նստած էի , յանկարծ ինձ մի անձ երեւաց եւ ասաց . «ով Մուհամմէդ . քեզ աւետիս լինի . ես Գաբրիէլն եմ . Աստուծ ինձ քեզ մօտ է ուղարկել . գու Աստուծոյ դեսպանն ես այս ազդի համար : «Կարգա» . ես էլ ասացի , ես կարգացող չեմ : Նա ինձ գրկեց եւ այնպէս սեղմեց որ ու չս գնաց . յետոյ ինձ բաց թողուց : Կրկին ասաց «Կարգա» , ես էլ ասացի , ես կարգացող չեմ : Նա ինձ կրկին գրկեց ու սեղմեց , որ ուշ գնաց : Յետոյ ինձ բաց թողուց : Երբորդ անգամ նորէն բանեց ու սեղմեց եւ նորէն բաց թողուց ասելով , «Կարգա քո Տիրոջ անունովը , որ ստեղծել է մարդու թանձրացած արիւնից . կարգա , եւ քո Տէրը գթած է , որ գրիչով սովորեցրել է մարդու այն բանը , որ նա չը զիւտէր» :

«Մի ուրիշ աւանդութիւն էլ այն է , թէ այն Օրհնեալը Հիրայի քարայրումը թեկնած նստած էր : Գաբրիէլը նորա ետեւիցը գալով նորան զարթնացրեց . նա ուղիղ նստեց ու աջուձախին նայեց , բայց ոչ ոքին չը տեսաւ , ու կրկին թեկնեց : Գաբրիէլը նորից մօտը գալով նորան զարթնեցրեց ասելով , «վեր կաց , ով Մուհամմէդ . ես Գաբրիէլն եմ» : Այն Օրհնեալը ուղիղ նստեց ու մի անձ տեսաւ , որ նորա առջեւից գնում էր . ինքն էլ նորան հետեւեց : Երբոր նորանք հասան Սաֆա եւ Մարլա սարիրի մէջ տեղը , նորա ոտները զետնի վերայ էին , գլուխը երկնքումը ու թեւերը տարածուած էին արեւելքից մինչեւ արեւմուտք . ոտները գեղին ու թեւերը կանանչ ու վլումը կարմիր յակինթից երկու վլուոցներ կային . ճակատը փայլուն եւ յստակ , երեսը լուսազարդ , ատամները սպիտակ եւ մազերը ոսկեփայլ բուստի պէս էին . երկու աչքերի մէջ անդը գրուած էր «բացի Աստուծուց ուրիշ Աստուծ չը կայ , Մուհամմէդը Աստուծոյ

**մարգարէն է»:** (\*) Երբոր մարգարէն այդ պատկերը եւ կերպարանքը տեսաւ, նորա զարհուրելի տեսքիցը սարսոելով ասաց, «գու ո՞վ ես, ո՞վ Աստուծոյ ողորմեալ, ես բնաւ մի բան չեմ տեսել քեզանից մեծ, եւ ոչ էլ քեզանից գեղցիկ երևով»: Նա էլ պատասխանից, «ես հաւատարիմ հոգին եմ, որ ուղարկվում եմ ամեն գեսազանների ու մարգարէների մօտ, կարդա, ո՞վ Մուհամմէդ»: Այն Օրհնեալն ասաց, «ես ի՞նչ կարդամ, որ երբէք կարգացած չեմ»: Յետոյ Գաբրիէլն իր թեւի տակիցը մի նամակ հանեց գրախտային մերաքսեղէնի վերաց յակինթներով շարուած գրուած: Նա բռնեց այն Օրհնեալի աչքի առջեւ ասաց «կարդա»: Նա էլ ասաց, ես կարդալ չը գիտեմ»: Յետոյ Գաբրիէլը երբէք անգամ զրկեց ու սեղմեց եւ բաց թողեց, եւ վերջը նորան կարդալ տուեց Ղուրանի «կարդա» սուրէի սկզբը: Սորանից յետոյ Գաբրիէլը սոսովը զարկեց գեանին, որից մի աղբիւր բղխեց: Հրեշտակը ջրիցն առաւ, իր նստանեղին, քիթը, բերանը, երեսը, ձեռներն ու ոսները երբէք անգամ լուանալով եւ մէկ անգամ էլ թաց ձեռքը գլխին քսելով, հրամայեց Մուհամմէդին, թէ զու էլ այսպէս արա: Եւ նա էլ այդպէս լուացուելուց յետոյ, Գաբրիէլը նորա առջեւն անցաւ երկու ծնրագրութեամբ նամազ արեց, եւ Մուհամմէդն էլ նորա արածի նման կատարեց: Հրեշտակն ասաց, ո՞վ Մուհամմէդ, ահա նամազն այսպէս կանեն»:

«Ասում են, թէ Գաբրիէլն աներեւոյթ լինելուց յետոյ Մուհամմէդը սիրոը գողալով տուն եկաւ ու ասաց, «փաթաթեցէք ինձ, փաթաթեցէք ինձ»: «Մի ուրիշ աւանդութիւն էլ ասում է, «ծածկեցէք ինձ, ծածկեցէք ինձ»: Նորանք էլ ծածկեցին նորան մի առժամանակ, մինչեւ որ վախն ու սովորմի անցաւ: Յետոյ Խաղիճէին ասաց, «ես իրաւ վախեցի իմ անձի համար»: Խաղիճէն ասաց, «մի

(\*) Միշտ ասում են թէ Մուհամմէդ կարդալ չը գիտէր, բայց այստեղ կարդաց:

վախիր, Աստուած քեզ տառապանքի մէջ չի դցի»: Մուհամմէդը կարծում էր որ այդ գէպքիրը, երեւոյթները եւ ձայները գեւերիցն են եւ «որ ինքը գիւհանար է»:

«Եւ մի աւանդութիւն էլ ասում է, թէ Աստուած քեզ չի արտամեցնի, որովհետեւ զու ազգականութիւնը յարգում, ամեն գժուարութիւն տանում, հիւրեր ընդունում եւ նեղուածներին օգնում ես»:

«Եւ ասում են, թէ Խաղիճէն ասաց, «մի վախիր, Աստուած բացի բարիքից քեզ ուրիշ բան չի անի. զու իրաւ հիւրասէր ես, ձշմարտախօս ես, հաւատարիմ ես եւ կարուաներին օգնող ես»:

«Եւ մի աւանդութիւն էլ ասում է, թէ Խաղիճէն ասաց, «Աստուած բացի բարիքից քեզ ուրիշ բան չի անի. զու իրաւ գեղասեսիլ ես, գեղաբարոյ ես, գեղեցիկ ձայն ունես, գեղեցիկ խօսող ես, գեղեցիկ գործեր ունես եւ գեղեցիկ նպատակի տէր ես»: Խաղիճէն նորան միխթարելուց յետոյ ասաց, «Եթէ ուզես, ես գնամ քո վիճակը իմ հօրեղբօր որդի Վարագային պատմեմ, անսնենք ինչ կամէ»: Այս Վարագայն մի շատ ծերացած քրիստոնեայ եղած արաք էր կարգում էր Աւետարանը արաքերէն, եւ մի աւանդութիւն էլ ասում է երբայցերէն, եւ օրինակում: Խաղիճէն Մուհամմէդից հրաման առնելով գնաց Վարագայի մօտ եւ ասաց, «ո՞վ իմ հօրեղբօր որդի, ասի՛ր ինձ թէ ո՞վ է Գաբրիէլը»: Վարագան էլ ասաց, «սո՞ւրբ, սո՞ւրբ», իսկ ոմանք ասում են, թէ ասաց «փառաւորեալ, փառաւորեալ» ու յետոյ շարունակեց, «ով Խաղիճէ, այս երկրի ժողովուրդը կուպաշտ է: մարգարէների միջեւ հաւատարիմ եղող Գաբրիէլին ո՞վ է ճանաչում, եւ նորա անունը ո՞վ է յիշում», Խաղիճէն նորան ասաց, որ Մուհամմէդը Գաբրիէլին տեսել է, եւ պատմեց մանրամանօրէն: Վարագան պատասխանեց, «Եթէ Գաբրիէլը վար իջել եկել է այս երկիրը, այն ժամանակ Աստուած այս երկրին մեծամեծ բարիքներ եւ օրհնութիւններ է տալու: Ով Խաղիճէ, եթէ քո ասածը ճշմարիտ է, հաստատ իմացիր, որ Մովսէսին եւ Յիսուսին

տրուած մեծագոյն օրէնքը Մուհամմէդին էլ է արուած»:

«Մի աւանդութիւն էլ սա է, թէ Վարսավան ասաց, ով Խաղիճէ այն մարդը որ Մուհամմէդին յայտնուել է կրկին գալու է. դու այնաեղ պատրաստ եղիր, եւ երբոր նա զայ, դու մազերդ բա՛ց ցիրու ցան արա. եւ եթէ այն անձն Աստուածոյ կողմանէ է, պիտի չը կարուղանայ տանել քո մազերի տեսքը»: Խաղիճէն ասում է, թէ ետ դարձայ տուն եւ պատմեցի Մուհամմէդին Վարսավայի ասածը, ու զգուշացրի, որ այն մարդը եկած ժամանակը ինձ լուր տայ: Եւ երբ որ Գարբիէլը կրկին երեւաց, Մուհամմէդն ասաց ինձ, թէ ահա՛ եկել է: Ես դետնի վերայ նստեցի եւ Մուհամմէդին նստեցրի իմ ծունկիս վերայ եւ հարցը թէ «այն մարդուն տեսնում ես», ասաց, «այո՞ւ տեսնում եմ». յետոյ ես զլուխս բացեցի եւ մազերս ցիրու ցան արցի ու հարցը, «այն մարդուն տեսնում ես». ասաց, «ո՛չ, գնաց»: Յետոյ ես ասցի, «աւետի՞ս քեզ, այն անձը Աստուածոյ կողմից քեզ համար ուղարկուած մի ազնիւ հրեշտակ է եւ քեզ համար բերել է մեծագոյն օրէնքը»:

Մի քանի ուրիշ աւանդութիւններից յետոյ, «ասում են, թէ այնուհետեւ յայտնութիւնները դադարեցին երեք տարի. բաց եւ այնպէս երեւում էր նորան երբեմն երբեմն Գարբիէլը ու միսիթարում թէեւ յայտնութիւն չէր բերում: Այս հանգամանքը խիստ ազգեց Մուհամմէդի վերայ. նա այն աստիճան արտօմած էր, որ մի քանի անգամ սարի զլուխը գնաց, որ այն տեղից իրան վար գցելով անձնասպանութիւն գործէր: Բայց այն օրերը Գարբիէլը նորան երեւում ու ասում էր, «ո՛վ Մուհամմէդ, ահա դու Աստուածոյ ձնարիտ մարգարէն ես»:

Այստեղ էլ մի քանի աւանդութիւններ բաց թողնելով յիշենք սա միայն, որ ձամէ ուշ ուսուլ եւ Վէֆա զրքերի մէջ ասուած է, որ առաջ երեք տարի Խորափիլ հրեշտակն էր ծառայում Մուհամմէդին, իսկ յետոյ Գարբիէլը, որ եւ բերեց նորա համար յայտնութիւնները: — Աւանդութեանց գիտութիւնում շատ նշանաւոր Շէյխ Մէջդ-ուղդին Թէյրուղ-

արագին ասում է Սըրաթուլ Միւսթագիմ զրքումը, թէ Աստուած հրամայեց Խարափիլին, որ Մուհամմէդին ծառայէ, եւ նա ծառայեց տասն ու մէկ տարի: յետոյ հրամայեց Աստուած Գարբիէլին, եւ սա ծառայեց 29 տարի: Այսպէս են զրում եւ այսպէս հաւատում:

Որպէս զի զրքոյկիս ընթերցողները որոշ տեղեկութիւն ունենան մահմետական վարդապետութեան մասին, թէ Մուհամմէդն ինչպէս էր ստանում իր յայտնութիւնները, յիշենք այսուեղ միւսլիմ աստուածաբանների գաղափարը, որոնք ութը եղանակ են հաշվուու:

Ա. — Ճշմարիտ երազներ, ինչպէս որ ասել է Այշէն.

Բ. — Գարբիէլն առանց Մուհամմէդին երեւալու նորա սրտի մէջ յայտնութիւններ էր զնում.

Գ. — Գարբիէլն երբեմն երեւում էր նորան Դէհյէյի Քէլբիի կերպարանքով և յայտնութիւններ բերում.

Դ. — Գարբիէլն երբեմն էլ իր բուն կերպարանքովն էր գալիս և յայտնութիւններ բերում.

Ե. — Գարբիէլը Մուհամմէդի Մէ՛րաճի (\*) ժամանակ նորան յայտնութիւններ էր տալիս երկնքումը.

Զ. — Մէ՛րաճի զիշերը Աստուած ինքը շատ բաներ յայտնեց Մուհամմէդին.

Է. — Իր յայտնութիւնների մեծ մասն ստանում էր իր կնոջ Այշէի անկողնում.

Ը. — Ուշագնացութեամբ էր ստանում յայտնութիւնները:

Այս վերջի եղանակի մասին տասը տասնեւհինգ այլեւայլ

(\*) Աւանդում են, թէ մի զիշեր Մուհամմէդին Աստուած Մէքքէից տարաւ երուսաղէմ, եւ նա այնաւղից բռւրագ անստունի վերայ հեծած գնաց Գարբիէլի առաջնորդութեամբ առաջին, երկրորդ, երրորդ մինչեւ հօթներոգ երկինքը եւ է՛լ վեր Աստուածոյ տթոռի սաաջը, շատ բաներ տեսու ես գարձաւ: Այդ գէպքին Մէ՛րաճ են տառւմ:

աւանդութիւններ կան, որոնց բովանդակութիւնը ամփոփուած այսպէս է լինուամ: Մուհամմէդը ուշը գնալիս, եթէ կանգնած էր լինուամ, սասակի կերպով վար էր ընկնուամ, այնպէս որ ում վերայ որ ընկնուամ էր, նա կարծուամ էր թէ ոսկորները կը փշը: երբեմն էլ նստած տեղն էր ուշը գնուամ: այդ ժամանակ աչքերը ուզգովում էին դէպի վեր, շրթունքները շարժում էին և ինքը դողում էր, և ասում են տեսնողները թէ խոկելու ձայններ էր հանում ինչպէս մի ուզտի ձագ: ընդհանրապէս պառկում էր կամ պառկեցնում էին և վերան մի լայն հանդիրձ գցում ծածկում մինչեւ որ դէպքը անցնում էր: Ասում են գոյնը փախչում էր և երեսիցը քրտինքը թափում էր կաթիլ կաթիլ: ինքն էլ ասում էր, թէ ուշագնացութիւնը սկսելիս, մի ձայն էր լուս զանգակի կամ երկաթի զլթայի ձայնի պէս: Շատ հաւանական է որ էպիլէպսիա հիւանդութիւնն էր այդ:

Այդ աւանդութիւններին նայելով պէտք է ասենք, որ Մուհամմէդի մարգարէութիան պատճառը և հիմքը նորա այս ուշագնացութեան հիւանդութիւնն է եղել, որին նա մանուկ ժամանակիցն ի վեր ենթարկուած է երեւում: ինչպէս որ Պուրանի շատ տեղերից յայտնի է, Մուհամմէդը մեծ խելքի տէր, խորհող, քննող, սրամիտ մարդ էր, թէեւ անգրագէտ եւ անուս: իրիւ աչքը բաց վաճառական մարդներ էր ժողովիլ, և իր ճանապարհորդութիւններն Սրաբիայում ու գէպի ուրիշ երկիրներ ընդարձակիլ էին նորա մեսութեան հորիզոնը, այնպէս որ այդ ճանապարհորդութիւններն անելիս նա շատ արար ցեղեր էր տեսել, աւերակներ էր տեսել և նորանց աւանդութիւններն ու պատմութիւնները լսել, և մանաւանդ այլեւայլ արար բարրառների հետ ծանօթացել: Նու անտարակոյս ունէր եւ կրօնական ձգտում եւ մի քիչ էլ բանաստեղծական ձիրք: Եթէ Մուհամմէդը մարգարէ գտառած չը լինէր, իր ժամանակի համար մի հանաւոր քեռհին եղած կը լինէր: Բայց մարգարէ եղաւ և Պուրանում գործ է ածում իր բոլոր տեսածը ու լսոծը:

Նորան մարգարէ շինովը կյադիձէն էր:

Երբ որ Մուհամմէդի ժամանակակից արարները սկսել էին կրօնական խնդիրներով զրագուել և քրիստոնէութիւնը նորանց վերայ խոր տպաւորութիւն էր արել, այնպէս որ Մուհամմէդի ազգակիցներից ոմանք արդէն ընդունել էին քրիստոնէական հաւատոքը, նա ինքն էլ յափշտակուելով նոյն ժամանակի քրիստոնեայ վանականների օրինակից սկսեց ճգնաւորների պէս քարայրերի մէջ մնալ ազօթել: Բայց իր ջղային հիւանդութիւնը, որ նորա աչքին բաներ էր երեւացնում և ականջներին ձայններ էր լսել տալիս, շատ անհանգիստ էր անում նորան, մանաւանդ երբ նա իր երկրի հասկացողութեան համեմատ կարծում էր, թէ իր հիւանդութիւնը գիւանարութիւն է եւ ինքը գիւերից է տանչվում, և ամենքն էլ նորան զիւանար են կանչուամ: և այդ պատճառով քանից ուզել էր որ անձնասպանութիւն գործէր: Իսկ հաղիձէն էր որ մեծ ջանքերով նորան համոզեց, որ ինքը ամեն կողմանէ լսւ, բարեբարոյ, աղնիւ, գթասիրտ, բարեպաշտ և գեղեցիկ մարդ է, ուրեմն անկարելի է, որ արգար ու ողբրմած Աստուածը թող տայ որ գիւերը տիրին մի այդ տեսակ անձի վերայ: Իր այս խօսքերը հաստատում էր այդ կինը երտուններով, ինչպէս այդ մասին աւանդութիւն կայ: Բայց որպէս զի բացատրէր այն ուշագնացութեան գէպքերը, տեսլիքները և ձայնները, հաւատացնում էր Մուհամմէդին այդ ճարասասան սիրահար կինը, թէ այն երեւոյթները ոչ թէ սատանաներից ու գիւերից են, այլ, ուրովհաւեւ Աստուած նորան ընտրել է, որ արար ազգի համար մարգարէ լինի, Աստուածոյ կողմանէ են բոլորն էլ եւ այն անձը, որ նա տեսել է, ուրիշ ոչ ով չէ, եթէ ոչ Գարերիէլ հրեշտակը, որ յայտնութիւններ բերելու համար պէտք է ծանօթացնէ զինքը Մուհամմէդին: Եւ Վարազայից էլ, որին նա շատ յարգում էր իրբեւ ճշմարիտ բարեպաշտ մարդ, և աղիձէն թէ շինծու թէ շիտակ վկայութիւններ բերաւ, և իր գաղափարը հաստատելով բոլորովին համոզեց Մուհամմէդին, թէ նա ճշմարիտ Աստուածոյ մարգարէն է: Ասում են

նաեւ, որ Բահիբաս անունով մի վարդապետ էլ, որ Մէք-քէյում մի տեսակ քրիստոնէութիւն էր տարածում, մեծ ազ-դեցութիւն է ունեցել Մուհամմէդին այս բանի մէջ համո-գելու համար: Շատ հաւանական է, որ 68րդ Սուրէի սկիզբի վեց համարները Մուհամմէդն այս դիպուածով է ասել իրեն երկնքից եկած յայտնութիւն:

1. «Ն. երդում եմ անում գրիչովը եւ նորանով ինչ որ գրում են.
2. Դու քո Տիրոջ չնորհքովը դիւանար չես.
3. Եւ իրաւ քեզ համար վարձք կայ, որի համար պէտք չնորհակալ լինել.
4. Եւ դու մեծ բարքի տէր ես.
5. Ուրեմն սպասի՞ր, եւ նորանք և թող սպասեն.
6. Թէ ձեզանից որն է փորձանքի մէջ»:

Մուհամմէդի կեանքը պէտք է երկու գլխաւոր մասերի բաժանել մէկը իր մանկութիւնից մինչեւ իր հասակի 40րդ տարին, երբ նա սկսեց իրան մարդարէ հրատարակել. իսկ 60 կամ 63 տարեկան էր: Բայց այս վերջի մասն էլ պէտք է էր՝ 10—12 տարի, իսկ կէսը քանի որ նա Մէքքէյումն Մէքքէից Մէդինա՝ մինչեւ իր մահը:

Արար մարդարէի կեանքի այս գործողութեան մասի երկու կտորները միմիանցից շատ եւ շատ տարբեր են: Մէքքէյում նա հալածուած էր, իսկ Մէդինաում նա մի սոսկալի արիւնահեղ բանակալ եղաւ: Մէնք առաջ ծանօթանանք նորա Մէքքէում անցկացրած կեանքի հետ: Որովհետեւ մահմեղա-մի մասը կրօնք է, իսկ միւս գլխաւոր մասերից, որոնց նութիւն, տեսնում ենք որ Մուհամմէդը կրօնքը հաստատեց Մէքքէյում, իսկ քաղաքանութիւնը Մէդինաում՝ կրօնքը ձգելով:

Մուհամմէդի Մէքքէյում արած ամենամեծ աշխատանքը եւ գործը Ղուրանն է: Ճշմարիտ է Ղուրանի մէջ կան եւ շատ կտորներ, որոնք ասուած կամ շինուած են Մէդինայում, եւ մէդինական կտորները աւելի շատ են քան թէ մէքքէա-կանները, բայց պէտք է ասել, որ մինչդեռ մէդինական սուրէները հեղինակուելիս ուրիշների ազգեցութիւնն էլ ներ-գործել է, —մանաւանդ Օմարի ազգեցութիւնը— մէքքէա-կան կտորները օտար ազգեցութիւնից բաւական մաքուր են, ու այս մէքքէական կտորները պարզ ցոյց են տալիս Մու-համմէդի իրան հոգեբանական եւ կրօնական զարգացումը եւ ներքին փոփոխութիւնները, նաեւ իսլամական կրօնքի սկզբնա-կան հաւատացեալների կիանքը եւ ընկերական ու անձնա-կան սովորութիւնները:

Վերեւ յիշուեց, որ արաբները հաւատում էին Աստուծոյն (Ալլահին) բայց բացի Աստուծուց ընդունում էին նորանք եւ Աստուծոյն ստորագրեալ անձնաւորացրած զօրութիւններ, ո-րոնց Աստուծոյ աղջիկներ էին համարում եւ որոնց միջոցով իրը թէ Աստուծ կառավարում է աշխարհքս:

Մուհամմէդը, որ տակաւին չէր համոզուած, թէ ինքը Աստուծոյ մարդարէ է, քեանինների կարճատող եւ նոյնա-յանդ ոճովը համատօս յորդորներ էր յօրինում միշտ երգու-մով սկսելով գրեթէ «մալրենի լեզու» գրբոյկի մէջի «աքա-ղա՛ղ, աքաղա՛ղ կարմիր կատարիդ մատաղ»ի կիրապովը ինքը կուապաշտ արար էր գեռ եւ կուապաշտ արարի կրօնքով ու տեսակէտից է խօսում Աստուծոյ աղջիկներովը երգում ա-նելով.

100րդ Սուրէ Ալ-Ադիաթ:

1. Երդնում եմ աքալով վազողուհիներովը.
2. Երգնում եմ կրակի կայծեր հանողուհիներովը.
3. Երգնում եմ առաւտանց նախանձողուհիներովը.
4. Որ գորանով փոշի են բարձրացնում.
5. Եւ միացաների մէջ աեղն են մտնում.
6. Իրաւ մարգս իր Տիրոջ դէմ ապերախտ է.
7. Եւ նա ինքը այս բանիս վկայ է.

8. Եւ ահա նա խիստ սիրում է կալուածքը .
  9. Մի՞թէ նա չը գիտէ , թէ ինչ որ կայ գերեզմաններում , գուրս է գալու .
  10. Եւ ինչ որ սրակը կում է յայտնուելու է .
  11. Ահա քո Տէրն այն օրը գիտէ նորանց :
- Կամ 103րդ Սուրէն Ալ-Ասր :
1. Երդնում եմ կէս օրից հոքի ժամանակովը .
  2. Որ մարդո վասարի մէջ է .
  3. Բացի նորանցից , որ հաւատում եւ բարիք են գործում , եւ միմիւնոց յորդորում ճշմարտութեան եւ միմեանց յորդորում համբերութեան :

Այսպէս են նաեւ 91—92—93րդ սուրէնները : Կան ուրիշ սուրէններ Մուհամմէդի կռապաշտութեան ժամանակից , որոնց վերայ յետոյ կամ ինքը կամ մի ուրիշը նոր մարեր են աւելացրել կամ խօսքերը փոխել : Այսաեղ մեր աւաջ բերած երկու սուրէնների վերայ աւելացրուած են առաջինում վերջի երեք եւ երկրորդումը վերջի մէկ համարը . որ բացայստ

Բացի այս մեր յիշած սուրէններից 82—89—95րդ եւ 100—108րդ սուրէններն էլ ասել է Մուհամմէդը իր մարգարէումտիրը եւ ոչ թէ իբրեւ նատուծոյ պատգամ : Իսկ երբ որ այն ժամանակ էլ զեռ չէր կարողանում թողնել արար կռական մանաւանդ յարութեան եւ զատաստանի գաղափարներ

51րդ սուրէ . Ալ-Ղարիաթ :

1. Երդնում եմ ցրիւ ցրուողուհիններովը .
2. Երդնում եմ ծանրութիւն կրողուհիններովը .
3. Երդնում եմ թեթեւ վազողուհիններովը .
4. Երդնում եմ հրամանը բաժանողուհիններովը .
5. Որ այն ձեզ խոստացուածը ճշմարիս է .
6. Եւ որ գատաստանը իրողութիւն է .

7. Երդնում եմ ուղիներ ունեցող երկնքովը .
  8. Որ գուք հակասող խօսքի մէջ էք , եւ ալլն :
- 86րդ սուրէ . Ալ-Թարրը :
1. Երդնում եմ երկնքովը եւ գիշերուայ աստղովը :
  2. Բայց քեզ ի՞նչը խացրեց թէ ինչ է գիշերուայ ասալը .
  3. Լուսավառ աստղը :
  4. Ամէն մի հոգի որ կայ , ունի իր վերայ մի պահապան :
  5. Ուրիմն մարդս թող խորհէ , թէ ինչից է ստեղծուած :
  6. Նա ստեղծուած է գուրս ցատկած ջրից :
  7. Որ գուրս է եկել երանքի ու էսուրծքի մէջաւելից :
  8. Իրաւ նա կարող է նորան ետ գարձնել (յարութիւն)
  9. Այն օրը որ գալունիքները կը յայտնուեն . (գատաստան)
  10. Այն ժամանակ նա ոչ ոյժ եւ ոչ օգնող կունենայ :
  11. Երդնում եմ երկնքովը , որ պայոյա է գալիո .
  12. Երդնում եմ երկրովը , որ բացիւմ է .
  13. Որ սա մի որոշ խօսք է
  14. Եւ կատակ չէ : Եւ ալլն :
- 95րդ սուրէ Ալ-Թին :
1. Երդնում եմ թուզովը . Երդնում եմ ձիթապառովը .
  2. Երդնում եմ Սինայ սարովը .
  3. Երդնում եմ այս պահով զաւառովը .
  4. Որ մենք ստեղծել ենք մարդուս ամենագեղեցիկ կերպով .
5. Բայց յետոյ իջեցրել ենք նորան ամենացած տեղերը .
6. Բացի նորանցից , որ հաւատում եւ բարիքներ են անում , եւ նորանք հասուցում կ'ունենան առանց չնորհակալութեան .
7. Եւ ի՞նչն է քեզ այսուհեան ոտիպում , որ գատաստանը սուս ես համարում .
8. Մի՞թէ Աստուած գատաստանի գատողը չէ :
- Մենք այսուեղ տեսնում ենք , որ Մուհամմէդը 51րդ սուրէում երդնում է քամիներովը , ծանր եւ թեթեւ ամպերովը , օգերեւոյթիների շարժումներովը , եւ 8րդ սուրէում երդնում է երկնքովը , աստղովը , որոնք ամենքն էլ բնութեան երե-

ւոյթներ են, նոյն իսկ թուզով եւ ձիթապառզով է երդում: Սյս բոլորը ցոյց է տալիս, որ Մուհամմէջը մի կողմից հաւատում է յարութեան եւ գատաստանի, բայց միանգամայն եւ բնութեան այս եւ այն անձնաւորացրած զօրութիւններին եւ մինչեւ անգամ ծառերի պառզներին:

Երբ որ Մուհամմէջը համոզուեց, որ ինքը Սսուսւմոյ մարդարէ է, սկսեց առաջ քիչ քիչ եւ ծածուկ իր աղջականների եւ մերձաւոր ծանօթների մէջ բարոյական եւ կրօնական յորդորներ խօսել եւ խօսել մեր այսաեղ յառաջ բերած օրինակների նման խառն յարութեան եւ գատաստանի վարդապետութիւններով: Սյս ծածուկ քարոզելն, ասում են, տեսեց երեք տարու չափ, եւ գորէ՛լ ցեղիցը շատերը հաւատնում էին նորա աղջու բանաստեղծական ոճով ասած խօսքերին. եւ ոմանք էլ սրտանց հաւատացին նորան: Իսլամի պատմաբանները շատ այլեւայլ ցուցակներ ունեն ամենառաջին միւսիմների անունների համար, մինք նորանցից միայն այսքանը քաղցինք, որ էին Խաղիճէն, Ալին, Զայդ իրն Սարըթ, Սրուէքը, յետոյ Օսման իրն Սփփան, Զուբէյը, Թալիս, Սա՞դ իրն Սբի-Վազգառ, Աբդուրրահման եւ ուրինը:

Երեք ասրին անցնելուց յետոյ, ասում են, որ հրաման եկաւ իրան, թէ ճշմարտութիւնը հրապարակաւ քարոզիր. եւ Մուհամմէջ սկսեց այլ եւս առաջուայ պէս ընդհանուր բաներ ըլ խօսել, ինչպէս օրինակի համար 87րդ սուրէն.

1. Փառք սուրք քո բարձրեալ Տիրոջ անունին,
  2. Որ ստեղծել է եւ կազմել,
  3. Եւ որ սահմանել է եւ առաջնորդել,
  4. Եւ որ զուրս է բերել արօտախուաը,
  5. Եւ վերջը նորան շինում է չոր խոտ.
10. Ով որ երկիւղած է, նա իրան յիշեցնել կը տայ.
  11. Իսկ չար եղողը կը հեռանայ նորանից,
  12. Նա որ այրուելու համար մեծ կրակի մէջը պիտի գցուի.
  - 13 Յետոյ նորանում ո՞չ կը մեռնի եւ ո՞չ էլ կ'ապրի:

14. Բայց երջանիկ կը լինի, ով որ ինքն իրան մաքրէ,
15. Եւ յիշէ իր Տիրոջ անունը եւ աղօթէ:
16. Իսկ դուք ընտրում էք այս աշխարհքի կեանքը.
17. Բայց բարին եւ տեւողը միւս աշխարհքն է:
18. Ահա աս նախնի թղթերումն է,
19. Արրահամմի եւ Մովսէսի թղթերումը:

Այլ ինչպէս որ այն ժամանակներն արաք բանաստեղծներն իրանց ոտանաւորները հրապարակներում ժողովուած մարդկանց առջև կարգում կամ անգիր ասում էին, Մուհամմէջն էլ իր անկանոն ոտանաւոր (արաք զրականութիւնը այդ կերպին սամց' է ասում) սուրէներն ատենախօսում էր ամբոխների գլխացը: Եւ որովհեաւ նորա սուրէների բովանդակութիւնը որոշակի միաստուածութիւն էր քարոզում եւ յարութիւն ու գատաստան, զա շատ բարկացրեց արաք կոապտաններին, այնպէս որ մեծ փոթորիկ եւ հալածանք առաջ եկաւ Մուհամմէջի եւ իր աշակերտների դէմ: Այս կերպով արաք մարգարէն շատ թշնամիներ ստացաւ՝ Սրու-Ճան, Սրու-Լահար, Վէլիդ իրն Մօղիրէ, Ախնաս եւ ուրիշ շտաբը: Մուհամմէջը, որ, ինչպէս Դուրանը ինքն է վկայում, «ո՞չ զիրքը գիտէիր, ո՞չ հաւատքը, թէ ինչ է», (սուրէ 42, 52), թէեւ լսում էր քրիստոնեաներից սրբազն պատմութիւն եւ Աստուածաշոնչի այս եւ այն խօսքը, բայց եւ անգրագէտ ու միակողմանի վառուած լինելով, շտաբանի բնաւ ու շաղբրութիւն չէր գարձնում եւ իր ուղածին մի քիչ նմանողներն առնում փոխփոխում իրան էր յարմարցնում: Իր այն ժամանակուայ վիճակի նկարագրութիւնը դնում է օրինակի համար՝ նոյի բերանը եւ 71րդ սուրէում այսպէս գանգաստում:

5. Ով Տէր իմ, ես իմ ժողովուրդս կանչեցի զիշերները եւ յերեկները, բայց իմ հրաւերը միմիայն նորանց փախուստը շատացրեց:

6. Եւ ամենն անգամ որ ես նորանց կանչում էի, որ գունուանց ներես, նորանք իրանց մատները դնում էին իրանց ականջներումը եւ ծածկում էին իրանց հագուստներով եւ

յամառվում ու հպարտութիւնով հպարտանում:

7. Յետոյ ևս նորանց կանչեցի հրապարակաւ,

8. Յետոյ ևս նորանց հետ յայտնի խօսեցի, եւ գաղտնի կերպով խօսեցի նորանց հետ առանձին...

20. Տէր, նորանք ապաստմբուել են ինձ դէմ եւ հետեւում են նորան, (կարծում է Վէլիդ թշնամուն), որի ստացուածքը եւ որդիքը միմիայն նորա վլասն են շատացնում.

21. Եւ նորանք մեծ խորամանկութիւն հնարեցին,

22. Եւ ասացին, «մի՛ ձգէք ձեր աստուածները, եւ մի՛ ձգէք վարդը եւ ոչ Աօլան,

25. Եւ ոչ եազուսը եւ ոչ էլ Նասրը»:

Երբ որ սկսեցին նեղութիւնները եւ հալածանքը, մարդի հետեւողներից ոմանք ետ քառուեցին, իսկ ոմանք հաստատ մնացին նորա նոր հաւատքին: Բայց ընդհանուր ժողովուրդը ասում էր նորան եւ «քէահին», «բանաստեղծ», «կախարդ», «դիւահար» ածականներով պահարակում անտառում էր նորան: Իսկ Մուհամմէդի պահարակում անտառութեան համար եկաւ այս յայտնութիւնը, սուրէ 69.

38. Այս, ես երդնում եմ ձեր ահասածովը,

39. Եւ ձեր չը ահասածովը,

40. Որ սա մի աղնիս մարդարէի խօսքն է,

41. Եւ սա բանաստեղծի խօսք չէ. ձեզանից քիչերդ էք հաւատում.

42. Եւ ոչ էլ հմայող քուրմի խօսք է. ձեզանից քիչերդ էք յիշում.

43. Աշխարհքների Տիրոջից եկող յայտնութիւն է:

Այս հալածանքները քանի գնացին շատացան եւ սաստկացան, բայց Մուհամմէդն էլ, թէեւ ՚ի սկիզբան հրապարակաւ խօսելուց ետ քաշուեցաւ, բայց իր համոզունքների մէջ ոչ թէ յամառուեց, այլ միշտ օր ըստ օրէ սկսեց աւելի պարզ եւ աւելի որոշ հակառակել հեթանոսութեանը եւ իր կրօնական գաղափարների համար աւելի փաստեր գտնալ, եւ միւս կողմանէ էլ սկսեց քրիստոնեայ կրօնաւորներից օրինակելով

